



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

## Քաղաքացիական հանրահավաքներ Մարտակերտ, Մարտունի, Ասկերան և Ստեփանակերտ քաղաքներում

Մայիսի 18-ին Մարտակերտ քաղաքում մի խումբ քաղաքացիների նախաձեռնությամբ կազմակերպվել է քաղաքացիական հավաք, որի նպատակը Հայաստանում ընթացող «Դիմադրություն» շարժման իրենց աջակցությունը հայտնելն էր, ինչպես նաև իրենց մտահոգությունները համաքաղաքացիներին, պատգամավորներին և շրջանի պատասխանատու անձանց փոխանցելը:

Հավաքին կազմակերպիչները հրավիրել էին ԱՀ ԱԺ բոլոր խմբակցություններին: Հավաքին ներկայացած 5 խմբակցությունների պատգամավորները վերահաստատել են իրենց միասնականությունը Արցախի և հայ ժողովրդի ճակատագրական հարցերում, որի վառ ապացույցը 2022թ. ապրիլի 14-ի՝ ԱՀ ԱԺ հայտարարությունն էր:

Մայիսի 28-ին՝ Հայոց պետականության վերականգնման օրը, քաղաքացիական հանրահավաք է կայացել Ստեփանակերտում: Այնուհետև «Ջենեսիս Արմենիա» հիմնադրամի նախաձեռնությամբ օրվա խորհրդին նվիրված համերգ է կազմակերպվել:

Երթի մասնակիցները Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու բակից «Միություն, պայքար, հաղթանակ», «Պայքար հանուն Արցախի», «Նիկոլ, դավաճան» կոչերով, «Չարթի՛ր, լաո» և այլ հայրենասիրական երգերի ուղեկցությամբ շարժվել են դեպի Վերածննդի հրապարակ, որտեղ կայացել է հանրահավաք:

Ճանապարհին երթին էին միանում տարբեր խմբեր՝ վերահաստատելով ազատ, հայկական Արցախում ապրելու իրենց կամքը: Նույն օրը հանրահավաքներ են կայացել նաև Մարտունի և Ասկերան շրջկենտրոններում: Ասկերան քաղաքում հրավիրված հավաքին ներկա էին ԱՀ ԱԺ-ում ներկայացված բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչները, ասկերանցիներ: Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավար Համլետ Ապրեսյանը, շնորհավորելով մայիսյան հաղթանակների առթիվ, նշել է, որ դժվար չէ պատկերացնել, թե ինչ ճակատագիր կունենար հայ ժողովուրդը, եթե Հայաստանն այդ ժամանակ չհռչակեր իր պետական անկախությունը: «Շենց հայոց պետականության անկասելի ուժի աջակցությամբ Արցախը կարողացավ 1988թ. ազատության դրոշմ բարձրացնել և վստահաբար բռնել անկախության ուղին: Մեր գալիքը հաղթանակները խորհրդավոր են այն արժեքների վրա, որոնք նվաճվել են հայ քաղաքացիների նվիրական պայքարով, ասել է թե՛ Սարգսյան պատի ազգափրկիչ դերն ու ոգեշնչումի ուժն ամբողջացնում են հայ ժողովրդի ազգային հպարտությունը: Արցախը երբեք չի կարող լինել Ադրբեջանի կազմում, քանզի համաժողովրդական կամարտահայտությամբ ավելի քան 3 տասնամյակ առաջ արդեն ընտրել ենք ապագայի մեր ուղին»,- ասել է Հ. Ապրեսյանը:

ԱՀ ԱԺ փոխնախագահ Գագիկ Բաղունցը, շնորհավորելով Հանրապետության օրվա առթիվ, խոսել է Արցախյան հարցով ընթացող բանակցությունների մասին. «Մենք չպետք է թույլ տանք փոխել բանակցությունների ձևաչափը՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, հատկապես՝ Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը: Ոչ մի դեպքում չպետք է ստորագրվի փաստաթուղթ, որտեղ Արցախը կարող է գտնվել Ադրբեջանի կազմում. դա է մեր հիմնական պահանջը, և անկախ ամեն ինչից՝ մեր կամքն այդ հարցում լինելու է անկոտրուդ»,- ասել է Գագիկ Բաղունցը:

Հանրահավաքի ընթացքում ելույթ են ունեցել նաև Միլրա Հայրապետյանը, Կառլեն Մայիլյանը, Ալյոնա Գաբրիելյանը:

Արցախի Մարտունի քաղաքում կազմակերպված «Հանուն ԱՐՑԱԽԻ՝ ՉԱՐԹՆԻՐ, ԼԱՈ» խորագրով խոշոր երթին մասնակցել են հազարավոր քաղաքացիներ: Երթը, որը մեկնարկել էր Ս. Ներսես եկեղեցու մոտակայքից, անցել է քաղաքի կենտրոնական փողոցներով, Գարեգին Նժդեհի արձանի կողքով և շարժվել դեպի Ազատության հրապարակ: Այնտեղ ներկաներին ուղղված խոսքով են հանդես եկել հայրենասիրած դաշնակցական Շանթ Չարչակճեղյանը, ՀՀԴ Արցախի ԿԿ անդամ Ալյոնա Գրիգորյանը, ԱՀ ԱԺ պատգամավորներ Գեղամ Ստեփանյանը և Կարեն Հովհաննիսյանը:

«Այսօր հայկական տոների օրացույցում ամենակարևոր տոնն է՝ Հայոց պետականության վերականգնման օրը: Այս կարճ տեւած պետականության շնորհիվ 1980-ական թվականների վերջերին մենք նորից կերտեցինք պետականություն: Եվ այսօր Արցախը հայ իրականության մեջ մեծ արժեք ունի: Արցախը խաղաքարտ չէ, որի վրա կարող են խաղաղություններ անել: Արցախը Հայաստան է, Արցախը հայկական է, Արցախը լինելու է, և կեցցե՛ անկախ ու միացյալ Հայաստանը, կեցցե՛ Մայիսի 28-ը: Լաոն արթո՛ն է», - իր խոսքում ասել է Ալյոնա Գրիգորյանը:

Ստեփանակերտում, Ասկերանում և Մարտունիում տեղի ունեցած հավաքներում մասնակիցները հնչեցրած կոչերով և ուղերձով իրենց աջակցությունն են հայտնել համազգային «Դիմադրություն» շարժմանը:



## Ուղերձ Ստեփանակերտի Վերածննդի հրապարակից

Մայիսի 28-ին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում «Հանուն Արցախի՝ Չարթնի՛ր, լաո» խորագրով կայացած հանրահավաքի ժամանակ հնչեցվել է միասնական ուղերձ.

Սիրելի՛ հայրենակիցներ, Այսօր՝ 2022 թվականի մայիսի 28-ին, Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում՝ Վերածննդի հրապարակում, մենք ոգեկոչում ենք հայոց պետականության վերականգնման՝ Հայաստանի Առաջին Հանրապետության օրը: 104 տարի առաջ՝ տեւական դադարից հետո, 1915 թվականի ցեղասպանության մոխիրներից հառնելով, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման արդյունքում՝ Սարգսյան պատում, Բաշ-Ապարանում և Ղարաբաղի խայտում տեղի ունեցած վճռորոշ ճակատամարտերից հետո հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը:

Սարգսյան պատում մկրտված ազատագրական պայքարի ոգին ուղղորդեց մեզ 1988թ. Ղարաբաղյան ազատագրական շարժման ընթացքում: Հազարավոր հայորդիների արյունով ու քրտինքով 30 տարի ի վեր կերտվել է հայկական երկրորդ հանրապետությունը՝ Արցախի Հանրապետությունը, որը համայն հայության հաղթանակների ու երազանքների մարմնավորումն է: Արցախի ժողովուրդը բոլոր այս տարիներին իր ընտրած ճանապարհով, համապետական ընտրություններով, համաժողովրդական հանրաքվեներով և Սահմանադրությամբ ի լուր աշխարհի ազդարարել է ազատության համար պայքարելու իր վճռականության մասին: Ու թե՛ 2020թ. 44-օրյա պատերազմի ընթացքում այս պայքարի ճանապարհին մենք մարդկային ու տարածքային ծանր կորուստներ ենք ունեցել, սակայն մեր կամքն անկուն է, պայքարի կրակն՝ անմար:

Այսօր և այստեղ՝ մեր ուժերի համախմբման, անցյալից դասեր քաղելու, ահազանցող մարտահրավերներին դիմակայելու կարիք ու անհրաժեշտություն կա:

Ուստի, գիտակցելով մեր պատասխանատվությունը համայն հայության առջև՝ դիմում ենք. Աշխարհասփյուռ մեր հայրենակիցներին. Սիրելի՛ քույրեր և եղբայրներ: Ծարունակեք նույն ոգով և նվիրվածությամբ համակողմանիորեն աջակցել ու սատարել մայր Հայրենիքին և Արցախին: Մեր կողմից ուզում ենք հավաստիացնել բոլորից, որ պայքարի ոգին չի կարող մարել, քանի դեռ կա այն սնուցող Հայաստան-Արցախ-Սփյուռքի ծառայեցնելու վճռականությունը:

Արցախի իշխանություններին՝ Բոլոր ջանքերն ուղղել Արցախի ժողովրդի կամքը մեր ժողովրդի ճակատագրին վերաբերող բանակցություններում լսելի դարձնելու և Արցախի անմիջական մասնակցությունն ապահովելու համար:

Հայաստանի Հանրապետության գործող իշխանությունները ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում կամ Արցախի ժողովրդի ճակատագրին վերաբերող որեւէ քննարկմանը պարտավոր են հանդես գալ բացառապես 1988թ. շարժման արժեքային հիմքերի, Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի և նախընթաց տարիներին հիմնավորված Արցախի Հանրապետության ու նրա ժողովրդի անվտանգության երաշխավորի դիրքերից:

Միջազգային կառույցներն ականատես եղան, որ Արցախը տարիներ շարունակ հավատարիմ է մնացել խաղաղ ճանապարհով՝ բանակցությունների միջոցով Ղարաբաղյան հակամարտությունը կարգավորելու, 1994թ. մայիսին հաստատված եռակողմ հրադադարի համաձայնագրին հետեւելու հանձնառություններին, և այդ կեցվածքի շնորհիվ տարածաշրջանում 25 տարուց ի վեր պահպանվել է անվտանգությունն ու փխրուն խաղաղությունը: Դրան հակառակ, Ադրբեջանը անցած տարիներին ամեն ինչ արել է առաջարկված համաձայնությունները մերժելու, իրավիճակը լարված պահելու և նոր պատերազմներ հրահրելու համար:

2016թ. ապրիլյան քառօրյա ռազմագործողությունների, իսկ 2020թ. 44-օրյա պատերազմի ընթացքում Արցախի ժողովուրդն ստիպված էր դիմակայել Ադրբեջանի և տարածաշրջանում ահաբեկչական վարքագծով հայտնի Թուրքիայի ու վարձու խմբավորումների ագրեսիային:

Մեզ համար այդպես էլ անհասկանալի մնացին, թե ինչու այդ նույն կառույցները խուլ ու անտարբեր մնացին պատմական հայրենիքում դարեր ի վեր ապրող հայ ժողովրդի հանդեպ նոր ցեղասպանություն իրականացնելու անթաքույց հավակնություններին, ինչու չկիրառվեցին միջազգային իրավունքի և միջազգային անվտանգության այն գործիքները, որոնք կարող էին անմիջապես կանգնեցնել կործանիչ պատերազմը:

Մենք պահանջում ենք արդարության վերականգնում, և համոզված ենք, որ միայն Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը կարող է երաշխավորել մարդու իրավունքների ամբողջական իրացումը և անվտանգ գոյությունը իր պատմական հայրենիքում:

Ժողովրդի պահանջներն ու դիրքորոշումը ուղեցույց են առաջիկա զարգացումների համար: Եվ այս նպատակադրությամբ մենք ողջունում ենք մայրաքաղաք Երեւանում, աշխարհի տարբեր քաղաքներում կատարվող Արցախի պաշտպանությանն ուղղված բոլոր քայլերը:

Ուրեմն՝ միասնականություն, պայքար, հաղթանակ:

### ԱՅ Աժ պատվիրակությունն այցելել է Լիբանան ու Կիպրոս

Մայիսի 24-31-ը Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանի գլխավորած պատվիրակությունը հայ համայնքների հրավերով այցելել է Լիբանան ու Կիպրոս: Պատվիրակության կազմում էին ԱՅ Աժ «ՀՅԴ» խմբակցության ղեկավար Արթուր Մոսիսյանը, ԱՅ արտաքին գործերի նախարարի տեղակալ Արմինե Ալեքսանյանը, Աժ նախագահի խորհրդական Կարեն Վանյանը:

Հանդիպման առաջին վայրը Լիբանանի հայկական գյուղաքաղաք Այնճարն էր, որտեղ պատվիրակությանը դիմավորեցին քաղաքապետն ու Այնճարի ՀՅԴ Կարմիր Լեռան կոմիտեի ներկայացուցիչները:

«Սարգիս Չեյթյան» ժողովրդային տանը հանդիպելուց հետո պատվիրակության անդամներն այցելեցին գյուղաքաղաքի պատկերասրահ, Մուսա Լեռան ազգագրական թանգարան, Սուրբ Պողոս Եկեղեցի եւ Մուսա Լեռան հերոսամարտի հուշահամալիր:

Այնուհետև «Մովսես Տեր Գալուստյան» սրահում հանդիպել են գյուղաքաղաքի հայ բնակչության հետ: Հանդիպման ընթացքում տեղի հայ բնակչությանն է ներկայացվել մինչպատերազմական եւ հետպատերազմյան Արցախի սոցիալ-տնտեսական իրավիճակը, իրականացված եւ ընթացիկ ծրագրերի գործընթացը:

Չնայած բազմաթիվ կենցաղային հոգսերի՝ այնճարցիները մտահոգված են Արցախի ապագայով: Արցախյան ազատամարտին անմասն չէր Այնճարը: Այնճարցի Գեւորգ Հաջիյանն անմահացել է Արցախյան 3-րդ պատերազմում:

Հանդիպմանը ելույթով հանդես է եկել Աժ «ՀՅԴ» խմբակցության ղեկավար Արթուր Մոսիսյանը:

Մայիսի 24-ին այցի շրջանակներում պատվիրակությունն ընդունել է Հայ Կաթողիկե տան կաթողիկոս-պատրիարք Ռաֆայել Պետրոս ԻԱ-ն:

Հանդիպմանը ներկա էին ՀՅԴ Լիբանանի Կենտրոնական կոմիտեի անդամներ՝ դոկտոր Էլի Թաշճյանը եւ Հակոբ Լատոյանը, Բեյրութի թեմի օգնական եպիսկոպոս Գեւորգ Եպիսկոպոս Ասատուրյանը եւ հայ կաթողիկե կղերական դասը:

Հայրենիքի համար ճակատագրական այս ժամանակահատվածում երկուստեք շեշտվել է ազգային միասնականության անհրաժեշտությունը:

Մայիսի 25-ին ԱՅ Աժ նախագահ Արթուր Թովմասյանի գլխավորած պատվիրակությունը Բեյրութում հանդիպել է Լիբանանում Հայաստանի Հանրապետության դեսպան Վահագն Աթաբեկյանի եւ դեսպանության դիվանագիտական անձնակազմի հետ:

Հանդիպմանը ծավալված ջերմ ու բարեկամական գրույցի ընթացքում քննարկվել են հայությանը հուզող օրակարգային հարցեր, Հայաստան-Արցախ-Սփյուռք փոխգործակցության հեռանկարները:

Մայիսի 25-ին Արցախի խորհրդարանի պատվիրակությունը Մերձավոր Արեւելքում Արցախի ներկայացուցիչ Նարայե Տեր-Սկրտչյանի ուղեկցությամբ Ազգային առաջնորդարանում հանդիպել է Լիբանանի հայոց թե-



մի առաջնորդ Գերշ. Տ. Շահե արքեպիսկոպոս Փանոսյանի հետ: Ներկաներն ընդգծել են, որ Արցախ-Լիբանան փոխադարձ համագործակցությունն ու փոխօգնությունը փաստում են, որ ազգովի միակամ ենք:

Մայիսի 25-ին Բեյրութում տեղի է ունեցել Արցախի պատվիրակության հանդիպումը Լիբանանի ՀՅԴ կենտրոնական գրասենյակի անդամների եւ լիբանանահայերի հետ:

Հանդիպմանը ներկա էին Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Շահե արքեպիսկոպոս Փա-

նոսյանը, 2020թ. մայիսի 15-ին ընտրված հայ պատգամավորներ, գործող ու նախկին նախարարներ:

Հանդիպման վերջում պատվիրակության պատվին կազմակերպվել էր համերգ, որի ընթացքում հնչել են հայրենասիրական, հատկապես՝ Արցախին նվիրված երգեր:

Միջոցառմանը ելույթով հանդես է եկել նաեւ «ՀՅԴ» խմբակցության ղեկավար Արթուր Մոսիսյանը:

Մայիսի 26-ին ԱՅ Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանի գլխավորած պատվիրակությանը Անթիլիասի Մայրավանքի գրասենյակում ընդունել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը:

Մայիսի 26-ին Աժ նախագահի գլխավորած պատվիրակության այցը Լիբանան ամփոփվել է «Շաղոյան» կենտրոնում ՀՅԴ Լիբանանի Կենտրոնական կոմիտեի անդամների հետ կայացած հանդիպմամբ:

ՀՅԴ Լիբանանի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ, երեսփոխան Հակոբ Բագրատունին, ողջունելով Արցախի պատվիրակությանը, վստահեցրել է, որ Արցախի ուղղությամբ ՀՅԴ Լիբանանի կառույցների աշխատանքները շարունակական են լինելու:

Մայիսի 30-ին ԱՅ Ազգային ժողովի գլխավորած պատվիրակությունը ՀՅԴ Կիպրոսի Հայ դատի հանձնախմբի հրավերով ժամանել է Կիպրոսի Հանրապետություն:

Այցի ընթացքում պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել իշխող ՏԻՍԻ կուսակցության նախագահ Ավերոֆ Նեոֆիլոսի եւ փոխնախագահ Խարիս Դեորկեստիսի հետ: Հաջորդ հանդիպումը Նիկոսիայի քաղաքապետի՝ Կոստանտինոս Երկվաճիսի եւ ավագանու անդամներ Օլիա Մարուտիայի եւ Կալերինո Տանիլիտիսի հետ էր:

Հանդիպումներին մասնակցում էին նաեւ ՀՅԴ Կիպրոսի կոմիտեի ներկայացուցիչ Սիմոն Այնեճյանը եւ Հայ դատի հանձնախմբի ատենապետ Հակոբ Գազանճյանը:

Մայիսի 31-ին Կիպրոսյան այցի շրջանակներում ԱՅ Աժ նախագահ Արթուր Թովմասյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է կիպրացի եվրոխորհրդարանական Կոստաս Մավրիտիսի հետ:

«Ապառաժ»

### Երեւանում շարունակվում են անհնազանդության ակցիաները

Ապրիլի 25-ից ընդդիմությունը փողոցում է ՀՀ գործող իշխանություններին հեռացնելու պահանջով, իսկ սկսած մայիսի 1-ից՝ ամենօրյա ռեժիմով անհնազանդության ակցիաներ, հավաքներ, հանրահավաքներ, երթեր են իրականացվում, շրջափակվում տարբեր պետական հիմնարկներ եւ շենքեր:

«Դիմադրություն» շարժումը մայիսի 1-ից գիշերում է Ֆրանսիայի հրապարակում. Շարժման առաջնորդներն այդ պայքարը համարում են արժանապատիվ քաղաքացիների պայքար, պայքար, որն ընդդեմ ստի է, ազգային խայտառակության, կապիտուլյացիայի եւ երկիրը նոր գիշունների տանելու:

Երեւանում ամեն օր ապակենտրոն անհնազանդության ակցիաներ անելով, շարժման մասնակիցները փակում են բազմաթիվ փողոցներ, պողոտաներ, խաչմերուկներ, կաթվածահար է արվում երթուղիները: Դրան զուգահեռ, ՀՀ եւ Արցախի դրոշներով ավտոերթեր են իրականացվում:

Քաղաքի տարբեր հատվածներում ոստիկանական մեծաթիվ ուժեր են կուտակվել: Նրանք բռնի ուժ են լկտի պահվածք են դրսևորում անհնազանդության խաղաղ ակցիայի մասնակիցների նկատմամբ:

«Առանց Նիկոլ Հայաստան», «Միություն, պայքար, հաղթանակ» վանկարկելով ակցիայի մասնակիցները հորդորել են քաղաքացիներին միանալ իրենց պայքարին:

Մայիսի 17-ին Ֆրանսիայի հրապարակում բեմահարթակ բարձրացան նաեւ Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ծնողներն ու հարազատները, ովքեր ներկայացրին Փաշինյանի դեմ տրված հանցագործության մասին հաղորդման մանրամասները:

Նրանք պահանջեցին դատախազությունից եւ քննչական կոմիտեից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածով քրեական գործ հարուցել Նիկոլ Փաշինյանի նկատմամբ: Պահանջեցին նաեւ ԲԴԽ նախագահ Գագիկ Ջհանգիրյանի հրաժարականը:

Մայիսի 28-ին զուգահեռ՝ «Դիմադրություն» շարժման հանրահավաքներ են տեղի ունեցել:

Սա նոր Ղարաբաղյան շարժում է՝ մայիսի 28-ի հանրահավաքի իր եզրափակիչ խոսքում ասաց ՀՅԴ Հա-

յաստանի ԳՄ ներկայացուցիչ, Աժ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իշխան Սաղաթեյանը:

Նա փաստեց, որ Արցախի Վերածննդի հրապարակում տեղի ունեցած հավաքը, Երեւանի հավաքն ու Սփյուռքի հանրահավաքներն ապացույց են, որ սա իսկապես նոր Ղարաբաղյան շարժում է:

«Կտեսնենք՝ ով է մաշելու. սա չենք մոռանում», - հայտարարեց նա՝ հիշեցնելով Նիկոլի խոսքը:

Իշխան Սաղաթեյանը նաեւ տեղեկացրեց, որ Շարժմանը միացած՝ 250-ից ավելի մտավորականների ու գիտնականների թիվն էլի ավելացել է:

«Ժողովրդի օրակարգը հստակ է. - ասաց նա, - այստեղ գտնվող քաղաքական ուժերը չեն, որ ձեւակերպել են Աժ արտահերթ Նիստի պահանջները, դրանք ձեւակերպել է հայ ժողովուրդը եւ տասնամյակների իր պայքարով, իր զրկանքով ապացուցել դրանցից չէղծվելու իր վճռականությունը»:

«Մենք ձեւակերպել ենք այն միևնույն պահանջները, որոնք անհրաժեշտ են, որ ունենանք պետականություն եւ Արցախ: Սա վերջնական ջրբաժան է: Ով դեմ է այդ փաստաթղթին, պետք է բացատրի՝ ինչու: Ուրեմն, ինքը կամ այլ երկրի գործակալ է, կամ սպասարկում է թշվառի շահերը: Այլևս որեւէ մեկը պետք է ոտնատակ չընկնի՝ կամ ժողովրդի հետ է, կամ ժողովրդի դեմ», - հայտարարեց Իշխան Սաղաթեյանը:

Նա նշեց, որ մինչեւ հունիսի 3-ը՝ Աժ արտահերթ Նիստի օրը, որը պետք է քննարկի հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին ընդդիմության առաջարկած հայտարարությունը, բոլոր ուժերը, ՀԿ-ները, մտավորականները, բուհերը, ակադեմիան, բոլոր պետական հաստատությունները պետք է դիրքորոշում հայտնեն: Ով ուզում է ունենանք պետություն, այդ փաստաթղթին չի կարող դեմ լինել. այլ լուծումը Հայաստանի ու Արցախի կործանումն է, որը մենք չենք ընդունում:

«Երկուշաբթիից ուրբաթ՝ պետք է կրկնապատկենք ուժերը, ավելի համախմբվենք եւ հասցեական գնանք դռները: Բոլորը պետք է դիրքորոշում հայտնեն՝ խաղեր տալ չկա: Վիճակն օրհասական է: Ով փաստաթղթին դեմ է, դեմ է ժողովրդին», - հայտարարեց Իշխան Սաղաթեյանը:

Երկուշաբթի՝ ժամը 11-ին, բոլորին հրավիրեց Ֆրանսիայի հրապարակ՝ հերթով գնալու մի քանի հասցեներով: Սկսած ԶՊ խմբակցության պատգամավորներից, որոնք գերի են ընկել այդ խելագարի ձեռքը, վերջացրած մյուսներով՝ բոլորը պետք է պատասխան տան, պարզ լինի՝ ով է ժողովրդի դեմ, ով՝ կողմ:

«5 օր ժամանակ ունեք ամբողջական պատկերն ստանալու, հունիսի 3-ը ջրբաժան է: 5 օրում հասկանում ենք՝ ով ով է, իսկ հունիսի 3-ին՝ ժամը 16:00-ին լինելու ենք խորհրդարանում», - հայտարարեց Իշխան Սաղաթեյանը:

Այս հայտարարությունից հետո շարժման անդամները տեղեկացրին, որ առաջիկա օրերին շրջելու են պետական եւ գերատեսչական բոլոր մարմիններով, որպեսզի ժողովրդին ներկայացնեն նրանց տեսակետը արցախյան հարցի մասին:

Մայիսի 30-ին շարժման անդամներն այցելել են կառավարության 3-րդ մասնաշենք, որտեղ տեղի է ունեցել բախում ցուցարարների եւ ոստիկանների միջեւ:

«Ոստիկաններն ակցիաների ժամանակ աչքի են ընկել անհամաձայն ուժի կիրառմամբ: Նրանք բռնություն են կիրառել նաեւ պատգամավորների նկատմամբ, քաշքշել են նրանց, պատառոտել հագուստը: Կան նաեւ հիվանդանոց տեղափոխված քաղաքացիներ», - այս մասին տեղեկացրել է ՀՀ Աժ փոխնախագահ Իշխան Սաղաթեյանը Ֆրանսիայի հրապարակում տեղի ունեցած ճեպագրույցի ընթացքում:

«Գնացել ենք կառավարության 3-րդ մասնաշենք, շատ քաղաքակիրթ կերպով ասել, որ ոչ մի չենք չենք շրջափակում, պատգամավորները պետք է բարձրանան նախարարության շենք, հանդիպեն նախարարներին եւ ասեն, որ այս փաստաթղթի վերաբերյալ դիրքորոշում հայտնեն: Բայց քանի որ չունեն դիրքորոշում, կամ այդ դիրքորոշումը շատ նման է Ալիեյի դիրքորոշմանը, եւ այդքան համարձակություն չունեն հակադրվելու Նիկոլին կամ ժողովրդին, գերադասեցին ոստիկանական ուժերով օրենքի պահանջներին դեմ գնալ եւ թույլ չտալ, որ պատգամավորները բարձրանան շենք», - նշել է Իշխան Սաղաթեյանը՝ շեշտելով, որ տեղի ունեցածը խայտառակություն է:

«Ահազն ԽԱՉՍՏՅԱԼ»

# Մենք պետք է հենց հիմա համախմբվենք ու տեր կանգնենք ե՛լ Հայաստանին, ե՛լ Արցախին

Մայիսի 18-ին Մարտակերտ քաղաքում մի խումբ քաղաքացիների նախաձեռնությամբ կազմակերպվել է բազմամարդ հավաք, որի ժամանակ ելույթով հանդես է եկել ԱԶ ԱԺ «ՀՀ Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր, ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Արթուր Մոսիյանը:

Նա նշեց, որ այս ամբողջ գործընթացը ԱԶ ԱԺ համար սկսվել էր դեռևս 2021թ. դեկտեմբերի 24-ին ՀՀ վարչապետի աթոռը զբաղեցրած Նիկոլ Փաշինյանի հայտնի ասուլիսի հետեւանքով, որից հետո ԱԶ ԱԺ-ն դեկտեմբերի 27-ին հրավիրեց ԱԺ արտահերթ նիստ եւ պատասխանեց այն բոլոր թյուրըմբռնումներին, մանկաուլյաքցիաներին, որը կատարվել էր ՀՀ վարչապետի կողմից: «Ինչպես գիտեք, ապրիլի 13-ին Նոր մանկաուլյաքցիաներ եղան Նիկոլ Փաշինյանի կողմից, որին հետեւեց ապրիլի 14-ին ԱԶ ԱԺ միասնական հայտարարությունը, ինչին միացել են ԱԶ ԱԺ բոլոր խմբակցությունները», - ասել է Ա. Մոսիյանը:

Նա ներկաներին բացատրեց հայտարարության բովանդակությունը՝ նշելով, որ հայտարարության մեջ ՀՀ իշխանություններին խորհուրդ է տրվում հրաժարվել աղետալի բանակցություններից, կոչ է արվում աշխարհասփյուռ հայությանը՝ տեր կանգնել Արցախին, դիմում է միջազգային հանրությանը բանակցային գործընթացը վերսկսել եւ Ղարաբաղի կարգավիճակի հարցը հետագա քննարկման առարկա դարձնել, ռուս խաղաղապահներին՝ ավելի ուշադիր լինել անվտանգային հարցերում, որպեսզի տարաբնույթ խնդիրներ չառաջանան: «Այդքանով չբավարարվելով՝ ասեմ, որ Արցախի խորհրդարանի այդ հայտարարությունը դարձավ մի պայթյուն խաղաղ ջրում եւ Հայաստանի մեր գործընկերների համար մեծ ազդակ դարձավ, ովքեր ելել են պայքարի 2 հարցով՝ Հայաստանը թրջացումից, Արցախը հայաթափումից փրկելու համար», - նշել է պատգամավորը:

Ա. Մոսիյանը վստահեցրեց, որ մեր ազգի առաջ 44-օրյա պատերազմից հետո ծառայած բազմաթիվ խնդիրները հնարավոր է լուծել Արցախ-Հայաստան-Սփյուռք՝ միասնական ազգային ճակատ ունենալով: «Այն, որ Նիկոլ Փաշինյանն այդ մարդը չէ, Նրան չեն ընդունում ո՛չ Հայաստանում, ո՛չ Արցախում, ո՛չ Սփյուռքում, դա փաստ է, ապացուցելու կարիք չկա, հետեւաբար՝ Նիկոլ Փաշինյանը պետք է հեռանա, իսկ հեռանալուց հետո, իհարկե, պետք է պատերազմի աղետալի հե-

տեւանքները քննվեն, եւ մարդիկ իրենց արժանի պատասխանն ստանան: Մենք պետք է համախմբվենք եւ տեր կանգնենք Հայաստանին ու Արցախին:

Արցախում շատ քիչ մարդիկ կան, որ խոսում են այն մասին, թե ինչու ենք մենք մասնակցում Հայաստանի ցույցերին: Սա ներքաղաքական խնդիր չէ, սա հանուն հայության պայքար է, հանուն Արցախի հայ մնալու պայքար է, իսկ Նիկոլ Փաշինյանը քաղաքական ան-



մեղսունակություն է ցուցաբերում՝ հայտարարելով, որ բանավոր ընկալումներով Գորիս-Կապան ճանապարհը տվել է, այստեղ գոչում է՝ Արցախը Հայաստան է եւ վերջ, սակայն հետո հայտարարում է, թե Արցախը անկախ լինելու տեսակետն է հնարավորություն երբեք չի ունեցել:

Նիկոլ Փաշինյանի բոլոր խոսքերն առավոտյան, կեսօրին եւ երեկոյան իրար հակասում են, եւ հույս կապել նման քաղաքական անմեղսունակ մարդու հետ՝ նշանակում է կորցնել հայրենիքը՝ ե՛լ Հայաստանը, ե՛լ Արցախը:

Ինձ համար տարբերություն չկա, սակայն շատ մարդիկ ասում են՝ ոտքի կկանգնենք այն ժամանակ, երբ Արցախը կարող է հանձնվել Ադրբեյջանին. ինչո՞ւ, եթե Սյունիքը հանձնվի՞ Նո՞ւյնը չէ: Եթե մենք մի ընտանիք ենք, ի՞նչ տարբերություն, թե որ մատդ է կտրվել, կամ որ երեխադ է իվանդ:

Նիկոլ Փաշինյանը վերջին 4 տարիների խաթարեց մեր միասնությունը՝ հասարակությանը բաժանելով սեւերի ու սպիտակների, հարվածելով ազգային կուսակցություններին, եկեղեցուն, բանակին, հայ ընտանիքին, նպատակ ունենալով օտարերկրյա շահերը սպասարկել:

Թրջաբարո ու թրջահաճո իշխանությունները կարծում են, թե ժողովրդի մեջքի հետեւում փաստաթղթեր ստորագրելով՝ կարող են ինչ-որ բան փոխել: Այդպես էր նաեւ Նոյեմբերի 9-ի կապիտուլյացիոն փաստաթուղթը ստորագրելու ժամանակ, սակայն ասում էր, թե ժողովրդի հետեւում ոչինչ չի անելու: Սա խոսում է այն մասին, որ մենք գործ ունենք քաղաքականապես անմեղսունակ, թշնամու շահերը սպասարկող իշխանությունների հետ, որին հեռացնելը ցանկացած արցախցու համար ոչ միայն իրավունք է, այլ նաեւ պարտականություն», - ասել է Ա. Մոսիյանը:

«Ես ուզում եմ նայել այն մարդկանց երեսին, որոնք ասում են՝ սա քաղաքական, ներքաղաքական հարց է, կամ այստեղ նստած՝ չեն ուզում ոչինչ անել: Արցախի ժողովուրդը միշտ եղել է Արցախ-Հայաստան-Սփյուռք եռամիասնության մասնիկը, եւ այս եռամիասնության քանդումը Ն. Փաշինյանի կողմից մեզ հասցրեց այս օրին: Եկել է ժամանակը ամեն ինչ վերականգնելու, թրջաբարո, թրջահաճո իշխանություններին հեռացնելու, եկել է ազգային իշխանություններ բերելու ժամանակը, որը սպասարկելու է ազգա-

յին շահերն ու փրկելու է Հայաստանն ու Արցախը, միավորելու է Սփյուռքը», - նշել է Ա. Մոսիյանը:

Պատգամավորն ընդգծեց, որ Ն. Փաշինյանն արդեն սկսել է նաեւ զանազան միջոցներով Սփյուռքի քանդման գործընթացը:

Ա. Մոսիյանը նշեց նաեւ, որ ԱԺ բոլոր խմբակցություններն այս հանդիպմանը ներկա են՝ փաստելու, որ թեկուզ որոշ հարցերում անհամաձայնություններ լինեն, եւ տարբեր մոտեցումներ ունենան, սակայն Արցախի հարցում բոլոր խմբակցությունները միասնական են եւ արդեն արտահայտել են իրենց դիրքորոշումները: «Հայաստանում եւ Արցախում ներկա եւ ապագա որեւէ իշխանություն չի կարող շեղվել մեր ընտրած ճանապարհից», - եզրափակել է Ա. Մոսիյանը:

Հավաքն ավարտվել է մասնակիցների միասնական՝ «Զարթնի՛ր, լաո» երգով:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Անմտություն է կարծել, թե որեւէ մեկը մեր փոխարեն գալու է մեր երկիրը պաշտպանի. Լեռնիկ Հովհաննիսյան



սակցական պետական կառավարման համակարգով, բանակով, պետական խորհրդանիշներով, կրթությամբ, մշակույթով եւ 12 000 քառ. կմ-ից Հայաստանը դարձավ 67 000 քառ. կմ-ոց ինքնուրույն պետություն:

Ծիշտ է, արտաքին բիրտ միջամտությամբ Հայաստանի առաջին հանրապետությունը կարճ կյանք ունեցավ, բայց կարողացավ հիմք ստեղծել թե՛ Խորհրդային Հայաստանի, թե՛ հետագա 3-րդ հանրապետության համար: Եթե չլիներ Հայաստանի առաջին հանրապետությունը, ապա չէր լինի ո՛չ Խորհրդային հանրապետությունը, ո՛չ 3-րդ հանրապետությունը. սա է Մայիսի 28-ի եւ եռագույնի խորհուրդը:

Հայոց անկախ պետականությունը պետք է լինի մեր ազգային գաղափարախոսության հիմնասյուններից մեկը, ինչպես նաեւ առաջին հանրապետության դասերից: Մենք պետք է առաջին հերթին առաջնորդվենք մեր ազգային, պետական շահերով, ցուցաբերենք անկոտրում կամք, որովհետեւ այսօրվա այս աշխարհաքաղաքական վայրիվերումներով, առանց ազգային, պետական շահը գիտակցելու՝ անմտություն կլինի կարծել, թե որեւէ մեկը մեր փոխարեն գալու է մեր երկիրը պաշտպանի եւ շենացնի:

Սա առաջին հերթին մեր բոլորի գործն է, մեր բոլորի ամենօրյա աշխատանքը:


Առաջին հանրապետության կարելորագույն դասերից է՝ ունենալ անկոտրում կամք, լինել միասնական եւ ունենալ այն տեսլականը, որը կոչվում է ազատ, անկախ ու միացյալ Հայաստան»:

Մայիսի 28-ին «Հանուն Արցախի՝ զարթնի՛ր, լաո» խորագրով բազմահազարանոց երթից հետո Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում կայացել է հանրահավաք, որի ընթացքում ելույթ են ունեցել մի շարք հասարակական, քաղաքական գործիչներ, Արցախյան պատերազմի հետեւանքով տուժած քաղաքացիներ:

Հանրահավաքին ելույթով հանդես է եկել ԱԶ ԿԿՄՍ փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանը.

«Հարգելի՛ հայրենակիցներ, 1918-ին միասնությամբ կարողացանք ստեղծել այն ժամանակվա քաղաքակիրթ արժեքա-մակարգին բնորոշ պետություն՝ բազմակու-

## Պատրաստ ենք պայքարելու մինչեւ վերջ՝ հանուն արդարության. Մհեր Կիրակոսյան



Ստեփանակերտում կայացած հանրահավաքին ելույթով հանդես է եկել Ապրիլյան եւ 44-օրյա պատերազմների մասնակից, Բաշաթաղի շրջանից բռնի տեղահանված Մհեր Կիրակոսյանը:

«Սիրելի՛ հայրենակիցներ: Ես Բաշաթաղից եմ, Բաշաթաղի սերունդ, արցախցու զավակ, Արցախի մայր հողում ծնված: Այսօր ես այստեղ կանգնած նկատում եմ, որ բոլորի մոտ կա միայն մի գաղափար՝ հայրենիքի փրկության գաղափարը:

Մեր լինելը մեր հայրենիքին, տե՛ր կանգնելը Արցախ աշխարհին, այն աշխարհին, որի համար թափվել է հազարավորների արյունը, հերոսներն անխնա զոհել են իրենց կյանքը: Մեր կանգնելը մեր հայրենիքին, պայքարելը մինչեւ վերջ: Պայքար՝ պայքար՝ մինչեւ վերջ: Պայքարելով մենք կարող ենք հետ բերել մեր կորցրած տարածքները, այն տարածքները, որոնք հանձնվել են թշնամուն: Հետ ելք բերելու Շուշին, Հադրութը, Ջարվաճառը, Բաշաթաղը եւ մնացած տարածքները: Պատրաստ ենք պայքարելու մինչեւ վերջ՝ հանուն արդարության: Արցախցու ոգին անկոտրում է, արցախցու արարչական ոգին՝ միշտ հպարտ: Մեր լինելը մեր հայրենիքին: Միություն, պայքար՝ հաղթանակ»:

# Այն իշխանությունները, որոնք Հայաստանը գահավիժման են տանում, մեկ օր ավել չպետք է մնան. Միքայել Հաջյան



գայում ստեղծեց իր կառավարությունը, իր օրենսդիր մարմինը՝ Ազգային խորհուրդը, իր գործադիր իշխանությունը:

1988-ին՝ 70 տարի անց, Հայաստանում եւ Արցախում հռչակվեց պետական անկախություն: 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակվեց ԼՂ Հանրապետությունը:

Սարգսյանի ճակատագրի մասին խոսելու համար անհրաժեշտ է հիշել, որ 2018-ից հետո իրավիճակը շեշտակի փոխվել է ոչ հայ ժողովրդի օգտին: Եթե այսպես շարունակվի, մենք տանուլ ենք տալու: Մենք չպետք է թույլ տանք, որ Հայաստան աշխարհը պարտվի: Մենք չպետք է թույլ տանք, որ այն իշխանությունները, որոնք Հայաստանը գահավիժման են տանում, մնան թեկուզ մեկ օր ավելի: Մենք պետք է հասնենք մեր ժողովրդի այս կարևոր խնդրի իրականացմանը, այնպես չկանք մենք, այնպես կործանված ենք մենք:

Արցախյան երրորդ պատերազմում մենք միայն Ադրբեյջանի դեմ չենք կռվել: Արցախյան երրորդ պատերազմում

2022թ. աշնանը մենք կռվել ենք մի շարք պետությունների դեմ, դիմակայել ենք նրանց հարձակումը, նրանց ագրեսիան: Ադրբեյջան, Թուրքիա, ահաբեկիչներ Սիրիայից, Լիբիայից, Պակիստանից, թուրքական Գորշ գայլեր, սպառազինություն աշխարհի ամենաժողովրդավրեժները, եւ այդքանի դեմ ընդամենը մեկ Պաշտպանության բանակ՝ իր սահմանափակ հնարավորություններով:

Յետեւեք լրահոսին, աշխարհը մնում է հիացած մեր Պաշտպանության բանակի, այդ մարտերին մասնակցած հայ քաջորդիների սիրագործություններով, որովհետեւ 44 օր մենք կարողացանք դիմակայել այդ վիթխարի ճնշմանը:

Մենք պատերազմում չենք պարտվել, այլ ընդամենը տանուլ ենք տվել ճակատամարտում, մեր մեջքը չի կտրվել, ընդամենը մի փոքր ցավ է տվել, այդպես համարենք:

Մենք պինդ ենք, մենք կռու ենք՝ կռու ճղու պուր, որ երբեք չի կտրվի: Մենք արդեն ոտքի ենք եւ ավելի ենք ամրապնդում մեր մեջքը այստեղ՝ Արցախում, այստեղ՝ Երեւանում, մայր հայրենիքի տարբեր մարզերում, քաղաքներում ու բնակավայրերում, հայոց սփյուռքում:

Մենք միասնական ենք. սա իրոք եռամիասնություն է, որից վախենում է մեր թշնամին: Նա փորձում է մաս առ մաս անջատել իրարից, փորձում է առանձին-առանձին կտրել մեզ, բայց չի հաջողվի: Մեր տղաները, այդ թվում՝ եւ իմ զավակները, պատերազմ են գնացել ոչ թե զոհվելու, այլ հաղթելու ու տուն դառնալու համար, բայց մի զգալի մասը, ցավոք, տուն չգարձան վահանով, վերադարձան վահանի վրա, այդ թվում՝ եւ իմ զավակները:

Որքան ցավ, որքան կսկիծ է պարունակում այդ բոլոր յուրաքանչյուրիս համար, նույնքան եւ մենք հպարտություն ենք ապրում մեր զավակներով: Մենք որդիներ ենք դաստիարակել, հայրենյաց զավակներ, հայրենյաց զինվորներ, եւ պետք է գալիք սերունդները մշտապես մտածեն այդ առաջնահերթության մասին՝ զավակներ ոչ թե առաջին հերթին ընտանիքի, այլ հայրենիքի համար, երկրի համար, որոնք պետք է ամուր պահեն երկիրը:

*Անվանի լրագրող ու հրապարակախոս, Բառօրյա եւ 44-օրյա պատերազմներում որդիներ կորցրած Միքայել Հաջյանի ելույթը մայիսի 28-ի հանրահավաքի ժամանակ.*

«Սիրելի՛ հայրենակիցներ, Այսօր մենք համահավաք, միասին, մեկ սիրտ ու հոգի դարձած տունում ենք հայոց նորագույն պատմության մեջ ամենանշանակալի իրադարձությունը՝ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրումը: Շնորհավոր տոնդ հա՛յ ժողովուրդ, այստեղ՝ Արցախում, Հայաստան՝ մայր հայրենիքում, Սփյուռքի գաղթօջախներում, շնորհավոր:

1918-ին, երբ հռչակվեց Հայաստանի առաջին հանրապետությունը, հազիվ 2 ամիս, նույնիսկ քիչ ավելի պակաս ժամանակահատվածում հռչակվեց նաեւ ԼՂ իշխանությունը՝ անկախ, ինքնավար իշխանությունը:

1918թ. հուլիսի 22-ին Շուշիում տեղի ունեցավ արցախահայության առաջին համագումարը, որը փաստորեն հռչակեց ԼՂ առաջին հանրապետությունը: Յետա-

տամարտում բոլորս միասնական էինք: Սարգսյանի ճակատամարտում հերոսություններ էին գործում նաեւ արցախցիները: Արցախյան ազատամարտում դարձյալ մենք միասնական էինք: Արցախյան ազատամարտում հերոսություններ էին գործում ոչ միայն արցախցիները, այլեւ մայր հայրենիքից ու սփյուռքից եկած մեր կամավորականները:

Այսօր, իհարկե, դժվարին կացության մեջ է հայոց հայրենիքը՝ Հայաստանը եւ Արցախը: Դուք գիտեք, որ 2018-ից հետո իրավիճակը շեշտակի փոխվել է ոչ հայ ժողովրդի օգտին: Եթե այսպես շարունակվի, մենք տանուլ ենք տալու: Մենք չպետք է թույլ տանք, որ Հայաստան աշխարհը պարտվի: Մենք չպետք է թույլ տանք, որ այն իշխանությունները, որոնք Հայաստանը գահավիժման են տանում, մնան թեկուզ մեկ օր ավելի: Մենք պետք է հասնենք մեր ժողովրդի այս կարևոր խնդրի իրականացմանը, այնպես չկանք մենք, այնպես կործանված ենք մենք:

Արցախյան երրորդ պատերազմում մենք միայն Ադրբեյջանի դեմ չենք կռվել: Արցախյան երրորդ պատերազմում



Բոլոր նրանց, ովքեր վահանով են վերադարձել, ովքեր վահանի վրա, պատգամ ունեն, որն ուզում են հնչեցնել Սարգսյանի պատերազմի տողերով:

Բայց մենք չենք կռու, մենք միշտ կանք, Մենք չհանգանք, դեռ կգանք, Երբ տան գանգը, ահագանգը, Որ մեր հոգու պարտքը տանք: Պայքա՛ր, պայքա՛ր»:

## Հայրենիքը վտանգված է ներքին ու արտաքին թշնամուց. Չինա Հովսեփյան

*Չոհված ազատամարտիկի այրի, 44-օրյա պատերազմում որդի կորցրած, հայրենագրված Չինա Հովսեփյանի խոսքը մայիսի 28-ի հանրահավաքի ժամանակ.*

«Հարգելի՛ հայրենակիցներ Այսօր այստեղ ենք հավաքվել հանուն հայրենիքի մի կտոր հողի, որը շաղախված է մեր որդիների արյամբ: Հասել ենք մի կետի, որը տանում է թրջացման. մեր մեջքի հետեւում դավադիր գործողություններ են կատարվում, առանց մեր կարծիքի կնքվում են Արցախին կործանման տանող պայմանագրեր:

1988 թվականից սկսած՝ անընդհատ պայքարել ենք հանուն հայրենիքի պաշտպանության ու հայապահպանման: Այդ տարիներին մեր բանակը թեեւ կրել է կորուստներ, սակայն կերտել է հաղթանակ, ազատագրել մեր հայրենի տարածքները եւ ապահովել սահմանի անդորրը: Սակայն փաստ է, որ մեր մեջ կան դասալիքներ, որոնք հանուն գումարի, պաշտոնի շարունակում են սատարել թշնամուն:

«Նահանջի» հրամանով մատնեցին Արցախը եւ սրի հանձնեցին մեր մատաղ սերնդին: Մենք ունեցանք հազարավոր զոհեր ու վիրավորներ, անհայտության մեջ գտնվող հայորդիներ եւ անտուն մնացած հայրենակիցներ, ինչպես նաեւ ունենք չափազանց թուլացած, տկարացած իշխանություն, որն ի գործու չէ պաշտպանել մեզ, մեր սահմանները:

Թուրքը գրավել է Արցախի 75 տոկոսը, հասել է Սյունիք, պահանջում է միջանցք եւ հայտարարում, որ մենք Ադրբեյջան ենք, իսկ մեր իշխանությունները շարունակում են լռել: Հայաստանում ապրող մեր հայրենակիցներն ամիսներ շարունակ կազմակերպել ու կազմակերպում են ցույցեր հանուն Արցախի, իսկ մյուս մասը «գոմբիացված» է:

Պահե՛ք, որ մենք նույնպես աջակցենք մեր հայրենակիցներին եւ կանխենք Արցախի հանձնման գործընթացը՝ հանուն մեր զավակների թափած արյան, Արցախ աշխարհից չհանձնված մի կտոր հողի, հանուն արդարության եւ գոյատևության:

Ինչպե՞ս պաշտպան կանգնեմ իմ խոցված Արցախին, երբ դրսից թուրքն է ներխուժում, ներսից՝ «դավաճան» հայը:

Ո՛ր էիր, աշխարհի, ինչո՞ւ լռեցիր, ո՞ր էիր, մարդի՛կ,



ինչո՞ւ կուրացաք, ո՞ր էին Արցախի հերոսները, ինչո՞ւ թե՛ ու թիկունք չդարձան վիրավոր ու անպաշտպան Արցախին:

Ես էլ մի վիրավոր կին եմ, ով կորցրել է ամուսնուն, եւ մի խոցված մայր, ով կորցրեց որդուն, եւ անտուն մի թռչուն, ով թափառում է քաղաքից քաղաք՝ փնտրելով իր Դրախտիկը: Զգիտեմ՝ ինչո՞ւ է քնած մնացել հայ ժողովուրդը, մի՞թե չի հասկանում գալիք օրվա արհավիրքի լրջությունը:

Եթե լռենք այսօր, վաղը չենք կարողանալու պատասխանել մեր զավակների տված հարցերին:

Ինչո՞ւ մատնեցին Արցախին...  
Նահանջ, նահանջ, նահանջ...  
Խուճապի մատնվեց հայը՝ դաշտում թողնելով վիրավոր ընկերոջը, մարտում ընկած զինվորին:

Ես չեմ եկել մեղադրելու որեւէ մեկին, ես այդ իրավունքը չունեմ, քանզի ամեն մարդ պատասխանատու է իր խղճի առաջ, Աստծո առաջ:

Ես պահանջում եմ Արցախ աշխարհին թշնամուն հանձնած դավաճանների դատապարտումը, որոնք զոհասեղանին դրեցին մեր անմեղ, հայրենասեր տղաներին:

Մեր բանակը չի պարտվել, այլ պարտվել ենք մենք, քանզի չենք հասկացել, որ մեր հաղթանակը մեր միասնական ուժի մեջ է:

Ուղքի՛ ելեք, հայե՛ր, որդեկորո՛ւյս ծնողներ, այրիացած կանայք, հայրենիքը վտանգված է ներքին ու արտաքին թշնամուց: Պետք է հետ բերենք Դիզակն ու Շուշին, աշխարհին ապացուցենք, որ հայն անկտրում է եւ պայքարող:

Ժամանակն է պայքարելու հանուն Արցախի, Հայաստանի եւ գալիք սերնդի՛:

«Հարգելի՛ հայրենակիցներ Այսօր այստեղ ենք հավաքվել հանուն հայրենիքի մի կտոր հողի, որը շաղախված է մեր որդիների արյամբ: Հասել ենք մի կետի, որը տանում է թրջացման. մեր մեջքի հետեւում դավադիր գործողություններ են կատարվում, առանց մեր կարծիքի կնքվում են Արցախին կործանման տանող պայմանագրեր:

1988 թվականից սկսած՝ անընդհատ պայքարել ենք հանուն հայրենիքի պաշտպանության ու հայապահպանման: Այդ տարիներին մեր բանակը թեեւ կրել է կորուստներ, սակայն կերտել է հաղթանակ, ազատագրել մեր հայրենի տարածքները եւ ապահովել սահմանի անդորրը: Սակայն փաստ է, որ մեր մեջ կան դասալիքներ, որոնք հանուն գումարի, պաշտոնի շարունակում են սատարել թշնամուն:

«Նահանջի» հրամանով մատնեցին Արցախը եւ սրի հանձնեցին մեր մատաղ սերնդին: Մենք ունեցանք հազարավոր զոհեր ու վիրավորներ, անհայտության մեջ գտնվող հայորդիներ եւ անտուն մնացած հայրենակիցներ, ինչպես նաեւ ունենք չափազանց թուլացած, տկարացած իշխանություն, որն ի գործու չէ պաշտպանել մեզ, մեր սահմանները:

Թուրքը գրավել է Արցախի 75 տոկոսը, հասել է Սյունիք, պահանջում է միջանցք եւ հայտարարում, որ մենք Ադրբեյջան ենք, իսկ մեր իշխանությունները շարունակում են լռել: Հայաստանում ապրող մեր հայրենակիցներն ամիսներ շարունակ կազմակերպել ու կազմակերպում են ցույցեր հանուն Արցախի, իսկ մյուս մասը «գոմբիացված» է:

Պահե՛ք, որ մենք նույնպես աջակցենք մեր հայրենակիցներին եւ կանխենք Արցախի հանձնման գործընթացը՝ հանուն մեր զավակների թափած արյան, Արցախ աշխարհից չհանձնված մի կտոր հողի, հանուն արդարության եւ գոյատևության:

Ինչպե՞ս պաշտպան կանգնեմ իմ խոցված Արցախին, երբ դրսից թուրքն է ներխուժում, ներսից՝ «դավաճան» հայը:

Ո՛ր էիր, աշխարհի, ինչո՞ւ լռեցիր, ո՞ր էիր, մարդի՛կ,



# Այսպե՛ս է եղել, որ մեր Մասիս սարը մնացել է այնտեղ. արցախյան շարժման ակտիվիստ Լյուդմիլա Գրիգորյան

*Ստեփանակերտում կայացած հանրահավաքի ժամանակ ելույթով հանդես է եկել նաև արցախյան շարժման ակտիվիստ, վաստակավոր բժիշկ Լյուդմիլա Գրիգորյանը.*

«Սիրելի՛ ժողովուրդ, Դժվար է խոսել Հայաստանից հեռու, ով շնորհավորեց հաղթանակը մեր Սարդարապատում և ով շատ թանկ գին տվեց մեր այսօրվա հավաքին: Խոնարհվում եմ Ձեր առաջ, պարոն՝ Հայաստան, խոնարհվում եմ բոլոր որդեկորույս մայրերի առաջ, խոնարհվում եմ այն բոլոր աղջնակների առաջ, ովքեր չհասցնելով կին դառնալ՝ այրի դարձան, խոնարհվում եմ մեր բոլոր այն վիրավոր տղաների առաջ, ովքեր սայլակներով մասնակցում են հայրենիքի պաշտպանությանը:

Խոսքս ուզում եմ սկսել 2 պարզ նախադասությամբ, որն ասաց մի վիրավոր երիտասարդ հանրահավաքի ժամանակ՝ կանգնած 2 մետոյա՝ ոտքին փոխարինող սարքի վրա, առանց ձեռքի: Նա ասաց.

«Եթե ոտք չունենամ, պառկած եմ գալու (կարծես նա ոտք ուներ), պառկած չկարողանամ՝ սիրտս է գալու, սիրտս կանգնի՝ հոգիս է գալու»:

Ժողովուրդ, անհամեստություն չկարծեք. ես էլ դժվար բեմ բարձրացա, ես էլ եմ կրում մեր պատերազմների ծանրացած ճանապարհների հետեանքները, բայց այս նախադասությունից հետո ոչ ոք իրավունք չունի հոգնելու, դժգոհելու, գլանալու, հեռանալու պայքարից: Այս հրապարակում, որտեղից 34 տարի առաջ սկսել է մեր համատեղ հայրենիքի լույսը բացվել, պետք է կարողանանք սորից քաղել մեր հաղթանակները:

Երբ մենք ընդունեցինք մեր փետրվարի 20-ի որոշումը, մեզ թվաց, թե հաղթանակը այսպես շուտ տեսանք, ես մեկ տարի հետո ճանապարհվեցինք մայր Հայաստան, որպեսզի Ազգային ժողովն ընդունի մեզ: Չիմանալով, որ մեզ պատերազմ է սպասվում, ոգեւորված ճանապարհվեցինք և եկանք բուն ողջունելու մեր Ազգային ժողովը:

Այնտեղ մենք հարց դրեցինք, որ մայր Հայաստանն ընդունում է Արցախին (այն ժամանակ՝ Լեռնային Ղարաբա-

ղին), և մենք հրաժարվելով խորթ մորից՝ Ադրբեջանից, եկել ենք, որ հարազատ մայրը գրկի մեզ:

Հանկարծ Լեւոն Տեր-Պետրոսյանի ներկայությամբ մեզ ասվում է. «Կներեք, բայց Սովետական Միության մեջ ենք ապրում, և Մոսկվան համաձայնություն չի տվել մեզ»:

Դուք պատկերացնո՞ւմ եք, մենք ԱԺ-ով մոտ 25-30 հոգի էինք, հիմնականում՝ տղամարդիկ, տեսա, որ տղամարդիկ հուզմունքից լացում են: Ես ասացի՝ ինչպե՞ս թե, դարաբաղցի կինը թույլ չի տա, որ իր կողքի տղամարդը



լացի: Բարձրացա ամբիոն ու տեսա, որ առնական տղամարդիկ են նստած ամբողջ դահլիճում, ու ասացի. «Ժողովուրդ, ես մի հասարակ կին եմ, բժշկուհի եմ Ղարաբաղից: Ռուսական դարոցում հայ ժողովրդի պատմություն չենք անցել, ու մեզ համար անհասկանալի է՝ որտե՞ղ են այն 1 500 000 հայերի գերեզմանները, այս ի՞նչ Դեր-Եյր-Չոր էր, որ մենք չկարողացանք դա շրջանցել: Ի՞նչ պատասխան ենք ստանում մենք: Ես այսօր անցա Արարատին նայելով, բայց կարծես ես չէի նայում Արարատին,

այլ սարն էր իմ աչքերին նայում՝ հարցնելով, թե՞ ժողովուրդ, հայ՛ ազգ, մինչեւ ե՞րբ եմ մալու պանդխտության մեջ, մինչեւ ե՞րբ եմ լռելու:

Հիմա, որ տեսնում եմ դահլիճի լռությունը, ես մտածում եմ, այսպե՛ս է եղել, որ մեր Մասիս սարը մնացել է այնտեղ, այսպե՛ս է եղել, որ մեր հայրենակից հայ երեխան, զավակը գերեզման չուներ»:

Ես մի կերպ ինձ հավաքելով՝ ասացի. «Թող Արցախում ընդամենը 150 000 բնակչություն լինի, բայց մենք թույլ չենք տա, որ դարաբաղցին նայի Մոսկվին այնպես, ինչպես դուք եք նայում Մասիս սարին»:

Մի փոքր պատմություն էլ ներկայացնեմ պատերազմի շրջանից:

Երբ մենք մտանք պատերազմի մեջ, ես՝ որպես բժիշկ, ճիշտ է՝ վիրավորված, բայց ե՛ւ փյունիկված, գնացի ընկերներին հետ Շուշի գնդում մասնակցելու պատերազմին: Փետրվար ամիսն էր, պատերազմը դեռ շարունակվում էր և մտել էր իր թեժ փուլի մեջ: Հայաստանից մեզ օգնելու եկան տղաները՝ 4 «Իկարուս» ավտոբուսներով:

Մայիսի 12-ին, 1994-ին, երբ կնքվեց զինադադարը, ես՝ որպես բուժկետի պետ, գնացի հրաժեշտ տալու տղաներին, և տեսա դատարկ մեքենաները: Այդ 4 ավտոբուսից մնացել էին ընդամենը 15 տղա: Ես արցունքներս կուլ տալով՝ ասացի. «Տղաներ, շնորհակալ եմ, որ եկաք մեզ օգնելու, կներե՛ք, որ այսքան եք մնացել: Ձեր ընկերները մնացել են մեր հողում, նվիրել են իրենց կյանքը մեզ»:

Այդտեղից մի երիտասարդ մայիս ամսին վարդ էր գտել, մոտեցավ ու ասաց. «Բժշկուհի՛, ինչո՞ւ ես շնորհակալություն հայտնում: Հայրենիքը բոլորին է: Մենք չենք եկել քո հայրենիքը ազատագրելու, այլ՝ մեր հայրենիքը պահելու»:

Ժողովուրդ, մեր հայրենիքն է եղել ու մեր հայրենիքն է մնացել: Խնդրում եմ, բոլորդ ի՞նչե՛ք, սա է ազգի ծրագիրը՝ միացյալ հայրենիք, միացում, անկախ Արցախ, միացյալ Հայաստան, տոկոսություն, քաջություն, միասնություն:

Եվ սորից՝ Ղարաբաղցին չի նայի Մոսկվին այնպես, ինչպես նայում ենք հիմա Արարատին»:

## Որպեսզի կարողանանք այս փորձություններից պատվով դուրս գալ, մեզ պետք է միասնություն. Կարեն Հովհաննիսյան



*Մայիսի 28-ին Արցախի Մարտունի քաղաքում Մոնթե Մելքոնյանի արձանի մոտ տեղի է ունեցել հանրահավաք, որի ընթացքում ելույթով հանդես է եկել ԱՀ ԱԺ Արցախի «Արդարություն» խմբակցության պատգամավոր Կարեն Հովհաննիսյանը.*

«Ներկա բարդագույն ժամանակաշրջանում իրապես Արցախը վտանգված է, արցախահայության գոյապահպանման հարցն է դրված, և որպեսզի կարողանանք այս փորձություններից պատվով դուրս գալ, մեզ պետք է միասնություն:

Ես շիրակցի եմ, գտնվում եմ Մարտունիում, Մոնթեն եկել էր Ամերիկայից, և այս միասնությունն է, որը թույլ է տալիս մեզ դիմակայել այն սպառնալիքներին, այն դավաճանություններին, որոնք վտանգում են մեր ազգի գոյությունը:

Իմ կոչն է համայն հայությանը. «Եղբայրներ՛, քույրեր՛, Արցախը վտանգված է, Արցախի պետականությունը վտանգված է, արցախահայության գոյությունը վտանգված է: Որե՛մն միասնաբար, մեկ ազգի, մեկ բռունցքի շնորհիվ վստահաբար հաղթելու ենք թշնամուն, հաղթելու ենք բոլոր թշնամիներին: Միասնությո՛ւն»:

## ՀՀ իշխանությունները խոսում են թշնամու հետ կեղծ ու անարժանապատիվ խաղաղության մասին

*ԱՀ ԱԺ «Արցախի ժողովրդավարական կուսակցություն» խմբակցության պատգամավոր Գեղամ Ստեփանյանի խոսքը Մարտունիում կայացած հանրահավաքի ժամանակ.*

«Չարմանալի կլիներ, եթե մեր երկրի համար այս ծանր փուլում չնկատվեր ու չզգացվեր մարտունեցիների ըմբոստությունը, որը պատմական բոլոր ժամանակաշրջաններում միշտ էլ արտահայտվել է՝ սկսած 1988թ. շարժումից մինչև բոլոր պատերազմներում մարտունեցիների անձնուրաց մասնակցություն:

ՀՀ իշխանությունները, որոնք պարտավոր են Արցախի ճակատագիրը որոշելու հարցում առաջնորդվել միայն ու միայն մեր ժողովրդի կամքով ու մեր ինքնորոշման իրավունքի հրամայականով, այսօր շեղվել են այդ ուղուց:

Մեր անունից բանակցողը ներգրավված է քննարկումների մեջ, որտեղ օգտագործվում է Ղարաբաղի էթնիկ բնակչություն արտահայտությունը: Այդ բանակցողին, մեր թշնամուն և միջազգային հանրությանը պարզ ու հաստատակամորեն հայտարարում ենք՝ «Մենք ազգային փոքրամասնություն չենք, մենք Արցախի Հանրապետության պետականակիրն ենք, մնացածն ուղղակի բարբաջանք է»:

Մեր միասնականությունը վտանգված է, որովհետև ՀՀ գործող իշխանությունները ազգին համախմբելու, ազգային շահը վեր դասելու փոխարեն խոսում են թշնամու հետ կեղծ ու անարժանապատիվ խաղաղության մասին: Կեղծ խաղաղության անվան տակ իրավունքների և անվտանգության լղոզված թեգերով որե՛ւ մեկին թույլ չենք տալու մեր հազարավոր գոհերի արյան գնով պահած հայրենիքը սորից բռ-



նակցել Ադրբեջանին:

Այսօր, մեր արժանապատիվ քաղաքացիները քաղաքամայր Երեւանում փողոց են դուրս եկել՝ մերժելու մեր միասնականությունը վտանգող իշխանություններին, մերժելու «Արցախը չի կարող լինել Ադրբեջանի կազմում» արտահայտությունից խուսափող իշխանություններին, մերժելու Արցախի ինքնորոշման իրավունքը կասկածի տակ դնող իշխանություններին:

Մենք չենք կարող անտարբեր մնալ մեր ճակատագրի համար պայքարի ելած հայրենակիցների գործողությունների նկատմամբ:

Եվ այսօր, այստեղից՝ մեր հերոսական Մարտունուց մեր բռունցքն ենք պարզում, մեր աջակցությունը հայտնում մեր հայրենակիցներին, ովքեր քաղաքամայր Երեւանի Ֆրանսիայի հրապարակում պայքարում են հանուն գաղափարի: Եվ ուրե՛մն, կոչ ենք անում ամբողջ հայությանը. «Արցախին մենակ չթողնե՛լ, չիրաժարվե՛լ դարավոր մեր պայքարից»:

Եվ ուրե՛մն, միություն, պայքար՛, հաղթանակ՛:

# Մեր պայքարն անժամկետ է, պայմանականորեն՝ այն կավարտվի հակամարտության վերջնական եւ համապարփակ կարգավորմամբ

Քաղաքական վերջին զարգացումների, Մայիսի 28-ի խորհրդի շուրջ «Ապառաժ»-ը գրուցել է միջազգային հարաբերությունների հարցերով ԱՅ նախագահի խորհրդակցական, պ.գ.թ. Նելլի Բաղդասարյանի հետ:

**- Տիկին Բաղդասարյան, կարելի՞ է արդյոք զուգահեռներ անցկացնել Արցախի Յանրապետության հռչակման եւ Յայոց պետականության վերականգնման միջև: 1918թ. մայիսի 28-ից 104 տարի անց՝ արդյո՞ք մեր պետականության կորստի վտանգ տեսնում եք:**

- Պետք է ընդգծել, որ շատ նույնական քաղաքական գործընթացներ են տեղի ունենում. երկու պետականությունների հռչակման հիմքում ընկած էր հայկական գոյի պահպանման խնդիրը:

Արդի փուլում աշխարհաքաղաքական եւ տարածաշրջանային իրողություններով պայմանավորված մեծ վտանգներ կան, որոնց չհակազդելու դեպքում կարող ենք կանգնել իսկապես պետականության կորստի լուրջ վտանգի առջև: Այսօր մենք ենք պատասխանատու հայկական երկու պետականությունների ճակատագրի հարցում:

**- Բոյուսելում եւ եռակողմ հանդիպումից հետո տարածված հայտարարությունը որքանո՞վ է վտանգավոր:**

- Բոյուսելյան հայտարարությունը չափազանց վտանգավոր էր այն իմաստով, որ նման ձեւակերպումը կարող է շատ արագ մտնել տեղեկատվական դիսկուրս, ապա հայտնվել կարգավորման քննարկումների դիսկուրսում եւ, այդպիսով, ոչ թե նպաստել կարգավորման գործընթացին, այլ արգելակել այն: Բոյուսելի հայտարարությունը որեւէ կերպ չի համապատասխանում հակամարտության կարգավորման փաստաթղթային փաթեթում առկա ձեւակերպումներին: Այդ է պատճառը, որ Արցախի օրենսդիրից եւ գործադիրից հնչեցին բավականին կոշտ հայտարարություններ: Դրանք արտահայտում էին ԱՅ հասարակական-քաղաքական դաշտի մտահոգությունները նոր սպառնալիքների հարցում:

Հուսանք, որ Եվրոպական խորհրդի նախագահը հաշվի կառնի այս արձագանքները, եւ ԵԿ-ն կվերադառնա նախկին պրակտիկային, որն առնվազն մինչեւ 2021 թ. դեկտեմբեր գործուն էր, երբ հղում էր կատարվում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ֆորմատին եւ մանդատին: Իրականում Բոյուսելից ընդամենը օրեր անց մենք արդեն ունենք արձանագրված փաստ. մայիսի 27-ին Իլիամ Ալիեւը հերթական անգամ բաց տեքստով հանդես է եկել ուժի սպառնալիքի դիրքերից, ապա հղում է կատարել Բոյուսելի հանդիպմանը՝ նշելով, «որ միջազգային կառույցների բառապաշարում բացակայում են «Լեռնային Ղարաբաղ» բառերը, եւ վերջին Բոյուսելյան հանդիպումն ապացուցում է դա»:

**- Ի՞նչ կասեք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության մասին, որքանո՞վ է ակտուալ այս փուլում համանախագահությանը հղում կատարելը:**

- Ոչ մի կերպ չպետք է նպաստել այն վտանգավոր դիսկուրսին, որ «ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունն այլեւս գործուն չէ, հետեւաբար գործուն չեն նաեւ համանախագահության կողմից քննարկված եւ տասնամյակների ընթացքում մշակված դիսկուրսը»: Դրանով մենք վտանգում ենք կարգավորման հիմքում ընկած միջազգային իրավունքի սկզբունքները: Ավելորդ չեմ համարում հիշեցնել, որ համանախագահությունը 2021 թ. ապրիլի 13-ին հայտարարել էր, որ «պետք է հասնել վերջնական համապարփակ եւ կայուն կարգավորման ձեռքբերմանը՝ կողմերին հայտնի տարրերի եւ սկզբունքների հիմքի վրա»:

Որեւէ մեկը չի կարող հաստատապես պնդել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձեւաչափը չեղարկվել է ուկրաինական ճգնաժամի իրողություններով պայմանավորված:

Սառեցումը չեղարկում չէ: Չեղարկման համար իրավական հիմքեր են պետք, առնվազն՝ միջազգային գազաթնամոզող, որով իրավական մակարդակով կչեղարկվի այդ ֆորմատը: Ավելին, ես որպես ֆորմատի վերագործարկման հնարավորություն կամ հավանական սցենար՝ տեսնում եմ առաջիկայում, հենց ուկրաինական ճգնաժամի հանգուցալուծումները փնտրելու ընթացքում: Մասնավորապես, հասկանալի է, որ Արեւմուտքը եւ ՌԴ-ն հավերժ չեն առճակատելու, իսկ ընդհանուր եզրերի եւ հարաբերման հնարավորությունների համար պետք են լինելու հենց այսպիսի ձեւաչափեր: Հատկանշական է, որ համանախագահությունն այն ձեւաչափն էր, որը նախկինում եւս ծառայել է՝ բացի բուն հակամարտության կարգավորմանը, նաեւ եռանախագահների երկխոսությանը:

Համանախագահող պետություններն իրենք էլ

**- ՌԴ-ն այս դեպքում ինչպիսի՞ դերակատարություն ունի եւ ինչպիսի՞ ազդեցություն կարող է ունենալ կարգավորման փորձերի եւ գործընթացների վրա:**

- Հերթական անգամ կցանկանայի ընդգծել, որ ՌԴ դերակատարությունը հակամարտության կարգավորման գործում որոշիչ էր եւ որոշիչ է: Արցախի Յանրապետությունում ՌԴ խաղաղապահության մանդատով պայմանավորված առկա status quo-ն պետք է պահպանվի մինչեւ հակամարտության վերջնական եւ համապարփակ կարգավորումը: Իսկ կարգավորման հիմքում ընկած պետք է լինեն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության կողմից ընդունված միջազգային իրավունքի երեք սկզբունքները: ՌԴ խաղաղապահ առաքելությունը երաշխավորում է փաստացի անկախ չճանաչված Արցախի Յանրապետության բնակչության անվտանգությունը: ՌԴ խաղաղապահությունը Արցախի Յանրապետության /Լեռնային Ղարաբաղ/ Պատասխանատվության գոտում գործնական եւ կոշտ դիվանագիտական պահվածք ցուցաբերեց 2022 թ. ապրիլի վերջին Փառուխ-Քարազլիսի իրողությունների հետ կապված՝ դրանով կանխելով ուկրաինական ճգնաժամի ընթացքում Ադրբեյջանի կողմից 2-րդ ճակատի բացման վտանգը Հարավային Կովկասում:

ՌԴ-ն 2020 թ. նոյեմբերի 10-ի եռակողմ պայմանավորվածության կողմ է: ՌԴ-ն Արցախի Յանրապետությունում իր խաղաղապահ ներկայությունը կարելուր տեղ է տալիս, եւ գործնականում realpolitik-ի տեսանկյունից որեւէ որոշում կամ որեւէ փաստաթուղթ թերեւս չի կարող կայացվել կամ ստորագրվել առանց պաշտոնական Մոսկվայի համաձայնության:

**- ՀՀ իշխանությունների վերջին շրջանի հայտարարություններն ավելի են խորացրել Արցախում ապրողների մտահոգությունները վաղվա օրվա հետ կապված: Արցախում ապրողներս դատապարտված ենք հարատեւ պայքարի՞ հանուն մեր ինքնության ու իրավունքների:**

- Կարծում եմ, որ կրկին իրատապ է համահայկական օրակարգում արցախյան օրակարգի շուրջ տեսլականների միասնականացումը, այն պետք է համազգային օրակարգի առանցքը լինի: Այո՛, արցախյան հասարակական-քաղաքական դաշտը շատ զգայուն է եւ հակադարձում է այն բոլոր հայտարարություններին եւ դեպքերին, որոնց մեջ վտանգ է տեսնում: Լինի իշխանություն, թե ընդդիմություն, պահպանողական, լիբերալ կամ ռադիկալ քաղաքական որեւէ ուժ, միջազգային որեւէ կառույց կամ անհատ, Արցախի Յանրապետությունը կտրուկ մերժելու եւ հակադրվելու է սեփական բնակչության կամարտահայտության արգելակմանը կամ վտանգմանը, եւ հակառակը՝ ողջունելու է նշած շրջանակների կողմից ձեռնարկված ԱՅ քաղաքական օրակարգին համապատասխանող եւ նպաստող պրակտիկ քայլերը: ԱՅ քաղաքական օրակարգը հաստատուն է:

ԱՅ դիրքորոշումը եւ պահանջը հստակ է՝ հաշվի նստել այդ օրակարգի հետ: Մեր պայքարն անժամկետ է, պայմանականորեն՝ այն կավարտվի հակամարտության վերջնական եւ համապարփակ կարգավորմամբ, որի առանցքում Արցախի Յանրապետության բնակչության ինքնորոշման իրավունքի իրացումն է եւ ԱՅ միջազգային ճանաչումը: Կարելուր եմ համարում արձանագրել, որ Արցախի Յանրապետությունը որեւէ վատթարագույն սցենար չի քննարկում եւ մերժելու է ցանկացած անընդունելի փաստաթուղթ:

**Չորուցեց Տաթևիկ ԱՐԱՋԱՆՅԱՆԸ**



### Վերադարձ կյանքին. Արամ Ասծատրյանի պատմությունը

Մարտունու զորամասերից մեկի համարյա մեկուկես տարվա զինվոր էր Արամ Ասծատրյանը, երբ 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսվեց պատերազմը: Բայց նա պատերազմի, դրա ընթացքի, հոկտեմբերի 28-ին ականանետի հարվածից ստացած ծանր վիրավորման մասին ոչինչ չի հիշում, չի հիշում նաեւ 4-ամսյա կոմայի, դրան հաջորդած վիրահատությունների մասին, բուժման շրջանը, ընդհուպ մինչեւ Ռուսաստանի Դաշնության «Три Сестры» վերականգնողական կենտրոն տեղափոխվելը: Մասնագետներն ու հարազատները համոզված են՝ լավ է, որ չի հիշում: «Ազատամարտիկների պուրակում տեղադրված լուսանկարներում մեր զորամասի զոհված զինվորներին մեկ-մեկ հիշում եմ, մեր զորամասից շատ են զոհվել», -ասում է Արամը. սա այն դեպքում, երբ տվյալ զորամասը համեմատաբար քիչ զոհ է ունեցել:

«Արամը սեփական նախաձեռնությամբ մոտեցել է վիրավորում ստացած երկու ընկերներին, մեկին կարողացել է հանել մարտի դաշտից, մյուս ընկերոջն օգնության հասնելու ընթացքում ականանետի կրակահերթի տակ է ընկել: Ընկերը զոհվել է, ինքն էլ՝ ծանր վիրավորվել», - Շեխեր-Կարմիր շուկա հատվածում որդու վիրավորման մանրամասներն է պատմում Արամի հայրը՝ Վլադիկ Ասծատրյանը: Արամին միայն 40 րոպե հետո են կարողանում օգնության հասնել. ցանկանում են շտապ օգնության մեքենայում տեղավորել, բայց ներսում արդեն 7 վիրավորներ կային, ու նրա համար նոր մեքենա են կանչում: Ծանապարհին առաջին շտապ օգնության մեքենային անօդաչու է հարվածում, բոլորը զոհվում են: Հարազատներն ասում են՝ այստեղ էլ Աստված փրկեց Արամի կյանքը. հրաշք տեղի ունեցավ: Իսկ Արամն իր բացատրությունն ունի: Նա հիշում է, որ դեռնա դպրոցա-

կան տարիներին մի անգամ ընկերներով բախտագուշակի մոտ են գնացել, եւ վերջինս, իր բաժակը նայելով, ասում էր, որ սկզբից դժվարություններ են սպասվում, իսկ հետո լավ է լինելու: «Այն ժամանակ չէի հավատում, նոր եմ հիշել, որ այդպիսի բան է եղել», - ասում է Արամը: Հարազատները պատերազմի ժամանակ հաճախ էին խոսում Արամի հետ, ու միշտ տրամադրությունը բարձր էր, մարտական: «Վերջին անգամ մեզ հետ հոկտեմբերի 27-ին էր խոսել: 28-ի առավոտը վիրավորվել է, մենք հոկտեմբերի 30-ի առավոտյան ենք իմացել այդ մասին: Իմացել ենք, որ տարել են Գիշիում տեղակայված հոսպիտալ, այնտեղից էլ՝ Գո-

ամսից հետո Արամը գիտակցության եկավ: Դրանից հետո պետք էր տեղափոխել այլ հիվանդանոց վերականգնման համար: Մայրը՝ տիկին Ռուզաննան, պատմում է, որ Երեւանի հիվանդանոցում Արամը շատ անհանգիստ էր, անընդհատ շարժվում էր, եւ որպեսզի ինքն իրեն չվնասի, ձեռքերն ու ոտքերը կապել էին: «Բայց ասում էին, որ շարժումները ռեֆլեքսային է անում: Երբ եղբորս տղան մտավ մոտը, ու երկուսով սկսեցին հոնգուր-հոնգուր լացել, հասկացանք, որ արդեն գիտակցության է եկել: Դրանից հետո Արամն ասում էր՝ գիտեի, թե ուրիշ տեղ եմ: Զգիտեր, որ պառկած է», - պատմում է մայրը:

Այստեղ Արամի անհանգստությունը երկու շաբաթում անցնում է, հետո այլ հիվանդանոցում երկու վիրահատություն է տանում ու կամաց-կամաց սկսում քայլել, կարգավորվում է խոսքը, քաշը: 2022թ. ապրիլին Արամն իր ոտքով վերադառնում է Արցախ, այստեղ էլ նշում են իր 21-ամյակը: Այս տարեդարձը Արամը շատ լավ հիշում է՝ ի տարբերություն նախորդի: Իսկ ի՞նչն է ուժ տվել Արամին՝ հավատը, աշխատասիրությունը, ուժեղ օրգանիզմը (Արամը սպորտով էր զբաղվում) եւ, իհարկե, իր մականունը՝ «МОЩНЫЙ» (հզոր): «Երեք-չորս տարեկան երեխա էր, երբ բախում խաղալու ընթացքում մի մեծ քար է ընկնում ոտքին, բայց ոչ մի ռեակցիա չի տալիս: Հարեւանի երեխան էլ թե՛ Արամ, բայց դու ի՞նչ «մոշնի» տղա ես: Դրանից հետո նրան բոլորը «մոշնի» էին ասում», - պատմում է տիկին Ռուզաննան:

Պատերազմը եւ վիրավորումը փոխել է Արամի բնավորությունը, հարազատներն էլ ամեն ինչ անում են, որ նրա սրտով լինի: Նա առաջին կարգի հաշմանդամություն ունի, բայց փորձում է վերադառնալ նորմալ կյանքի, մենակ իջնում է բակ, հանդիպում ընկերների հետ: Նրա օրվա ռեժիմի անբաժանելի մասն է Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն այցելելը, չնայած այստեղի պայմանները համեմատելի չեն ՌԴ վերականգնողական կենտրոնի հետ: Արամն էլ մի քիչ դժկամությամբ է պարապմունքներին մասնակցում. ասում է՝ ընկերներին մեծ մասն աշխատում է, ես էլ եմ ուզում աշխատել: Վիրավորվում է, երբ ասում են՝ դեռ պիտի բուժվես: «Գործ պիտի ճարեմ, հետո աղջիկ. բոլորը պրոբլեմներ են», - ասում է Արամը:

Տարբերակ ԱՐԱՏԱՆՅԱՆ



րիս ու սանավիացիայով հասցրել Երեւանի «Էրեբունի» բժշկական կենտրոն», - պատմում է հայրը: Զորս ամիս շարունակ միայն մի քանի րոպեով էին ծնողներից մեկին թույլ տալիս տեսակցել, մի օր՝ մայրը, մի օր՝ հայրը: Հետո ավելի շատ՝ մեկ-երկու ժամով են կարողանում մնալ մոտը: Գլխի թափանցող վիրավորում էր ստացել Արամը, մի քանի բեկորներ դեռ չեն հանել: Բժիշկները շատ չէին հուսադրում՝ ասելով, որ ամեն ինչ Արամից է կախված: Ու կարծես հրաշք լիներ, որ 4

Հայրն ասում է, որ գիտակցության գալուց հետո առաջին խոսքն էր՝ որտե՞ղ է գեներ, որտե՞ղ է գեներ: Ասացի՛ կռիվ չկա, դու հիվանդ պառկած ես: Արամի համար դրամահավաք է կազմակերպվում, ի վերջո երկար քաշքշուկներից, տեղափոխման հետ կապված տարբեր խնդիրներից հետո ԱՅ պետական նախարարի, առողջապահության նախարարի աջակցությամբ հունիսի 19-ին չարտերային ռեյսով տեղափոխում են ՌԴ «Три Сестры» վերականգնողական կենտրոն:

→ 8

### Արցախում մեր գործունեության ոլորտներին վերջին շաբաթվա ընթացքում գումարվեց նաեւ մշակույթը

«Ջենեսիս Արմենիա» ուղեղային կենտրոն/հիմնադրամի նախաձեռնությամբ 2022թ. մայիսի 19-ից Արցախում կայացել է մշակութային մեծ փառատոն, որի շրջանակներում տեղի են ունեցել թատերական ներկայացումներ, ֆիլմի ցուցադրություն, ազգային պարի բաց դասեր, մշակութային քննարկումներ: «Արցախն ապրում է» խորագրով փառատոնի անմիջական հովանավորն է «Genesis Armenia»-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սամվել Վարդանյանը՝ տիկնոջ՝ Աննա Դադասյանի հետ: Մշակութային փառատոնը կայանում է Արցախի Հանրապետության պետնախարար Արտակ Բեգլարյանի բարձր հովանավորությամբ: «Ջենեսիս Արմենիա» ուղեղային կենտրոն/հիմնադրամի նախաձեռնած 10-օրյա փառատոնն իր մասշտաբով առաջինն է հետպատերազմական Արցախում: «44 աստիճանի վրա» ներկայացումը Արցախում ցուցադրելու գաղափարից է ծնվել Արցախում մշակութային փառատոն կազմակերպելու միտքը,- «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է «Ջենեսիս Արմենիա»-ի PR պատասխանատու Գառնի Մուրաֆյանը: «Եղել ենք ճարտարում, Մարտունիում, Մարտակերտում, Ստեփանակերտում, Աղավնյում: Բացի



ներկայացումներից՝ նաեւ դերասանների հետ փակ հանդիպում է կայացել, եղել են ազգային պարերի բացօթյա դասեր, ֆիլմի դիտում: Մայիսի 26-ին դերասան Արա Գեւորգյանը հանդես է եկել ծխելու վնասակարության մասին մոնոներկայացմամբ, իսկ ամ-

բողջ փառատոնը եզրափակել ենք ռազմահայրենասիրական բացօթյա համերգով, որի ժամանակ ելույթ են ունեցել նաեւ Ներսիկ, Աղասի եւ Արաբո Իսպիրյանները: Զանի որ պատերազմի վերքերը թարմ են, փառատոնի կազմակերպիչները որոշ մտավախություն ունեին, բայց հանդիսատեսը շատ դրական է արձագանքել միջոցառումներին: «Երբ դեռ սկզբնական կազմակերպչական փուլն էր ու փառատոնի մասին շուկաներն արդեն տարածվել էին, շատ զանգեր, նամակներ էինք ստանում, թե երբ են լինելու ներկայացումները: Արձագանքը շատ մեծ էր, ու ներկայացումներն անցել են լեփ-լեցուն դահլիճներում. հատկապես մանկական ներկայացումները բավական ինտերակտիվ էին: Իսկ երեխաների ուրախությունը, ժպիտը դրական էներգետիկա է տալիս եւ մեկ անգամ եւս համոզում, որ պետք է նման միջոցառումներ անել: Մարդիկ ներկայացումներից, միջոցառումներից հետո մոտենում ու ասում էին՝ լավ է, որ նման միջոցառումներ եք կազմակերպում: Հետպատերազմական Արցախում մշակույթը կարեւորագույն ոլորտներից է, որը չպիտի աչքաթող արվի», - տպավորություններով կիսվում է Գառնին:

→ 8

### Արցախում մեր գործունեության ոլորտներին վերջին շաբաթվա ընթացքում գումարվեց նաեւ մշակույթը

7 ← Խոսելով հետագա ծրագրերի մասին՝ նա նշում է, որ նման միջոցառումները շարունակական բնույթ են կրելու: «Տարբեր ֆորմատներով, տարբեր միջոցառումներով «Ձենեսիս Արմենիան» միշտ Արցախում է: Մենք ամիսը երկու-երեք անգամ Արցախում ենք, մեր ծրագրերի մեծամասնությունն Արցախում է: Մեր գործունեության ոլորտներին այս վերջին շաբաթվա ընթացքում գումարվեց նաեւ մշակույթը», - ասում է հիմնադրամի PR պատասխանատուն:

համընթաց քայլող, բարեկեցիկ պայմաններ առաջարկող պետություն, մենք դա անելու ենք միասին», - շեշտել է «Ձենեսիս Արմենիա»-ի հոգաբարձուների խորհրդի նախագահը:

«44 աստիճանի վրա» ներկայացումը պատմում է սփյուռքահայ հայրենադարձ գույզի մասին, ովքեր մնում են օրեցօր դատարկվող գյուղում, եւ նույնիսկ գյուղից վերջին բնակչի հեռացումը չի կտրում հայրենիքում ապրելու նրանց կամքը:

Համազգային թատրոնն Արցախում էր 2020թ. պատերազմից անմիջապես հետո, ու դերասան Արման Նավասարդյանի խոսքով՝ այն ժամանակ շատ պատճառաբանություններ էին հնչում, թե ով սիրտ ունի ներկայացում դիտելու, մարդ չի մասնակցելու, բայց նրանք 5000-ից ավելի հանդիսատես են ունեցել:

«Ճարտար, Ասկերան, Մարտակերտ, Ստեփանակերտ քաղաքներում ընդհանուր առմամբ 16 մանկական ներկայացում ենք խաղացել: Մեզ համար կարեւոր էր, որ առաջին հերթին երեխաներին վերադարձնենք ժպիտը, այքերի փայլը, նորից հեքիաթով գմայլվելու կարողությունը: Հասկանում եք՝ ինչ ապրումներ ենք ունենում, երբ տեսնում ենք, որ երեխաները ծպտում են, ծիծաղում են, իսկ ծնողները լալիս են», - ասում է դերասանը:

Նրա խոսքով՝ ավելի շատ խմբեր պիտի գան Արցախ, որովհետեւ մենք պետք է մեր ողնաշարը շտկենք. ոչ ոք չի գալու մեզ օգնի:

Թատրոնի գեղարվեստական ղեկավար Նարինե Գրիգորյանի կարծիքով էլ՝ մշակույթը լավագույն ձևն է՝ ցույց տալու, որ Արցախն ապրում է: «Մեր պարտականությունն է ապրել ու ապրեցնել: Տվյալ մշակույթը ջոկակարգի է, որով պետք է ամուր կառչես հողին ու ջոկ տեսակը ցույց տաս, որ հասկանան՝ սա ապրելու արժանի ժողովուրդ է: Ինչո՞վ պիտի դրսի մարդը հասկանա, որ այս երկու ազգերը իրար հետ չեն կարող ապրել: Մենք միայն մշակութային տարբերությամբ կարող ենք ցույց տալ, որ անհնար է այդ մարդկանց հետ ապրել», - ասում է դերասանուհին: «Լոռեցի Սաքոն», «44 աստիճանի վրա» ներկայացումների տոմսերի վաճառքից գոյացած ամբողջ գումարը փոխանցվել է Ստեփանակերտ տեղափոխված Շուշիի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնին:

#### Դժվար օրերն իրենց հետքն են թողել, բայց դա հաղթահարելի է. Արցախում ցուցադրվել է Դ. Սահակյանի «Օլիմպիկոս»-ը

Հետպատերազմյան Արցախը, իհարկե, տարբերվում է. դժվար օրերն իրենց հետքն են թողել, եւ պատերազմը շատ է տպավորվել մարդկանց մեջ, բայց, կարծում են, որ դա էլ հաղթահարելի է, որովհետեւ պատմության ընթացքում եղել են նման դեպքեր,

որոնք հաղթահարել ենք: Այս մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է ռեժիսոր, մուլտիպլիկատոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Դավիթ Սահակյանը: Նա Ստեփանակերտում է «Ձենեսիս Արմենիա»-ի «Արցախն ապրում է» փառատոնի շրջանակներում, որի ընթացքում էլ ցուցադրվել է «Օլիմպիկոս» մուլտֆիլմը: Ֆիլմում պատմվում է, թե ինչպես հայոց արքա Վարազդատը, հաղթահարելով բազում դժվարություններ, դարձավ Հունաստանում անցկացվող օլիմպիական խաղերի հաղթող:

Ռեժիսորի խոսքով՝ հատկապես հիմա շատ կարեւոր է մեր պատմության հաղթական դրվագների մասին հիշեցնելը: «Չեմ կարծում, թե պատերազմն ավարտվել է ու ավարտվել է մեր պարտությամբ. պատերազմը դեռ շարունակվում է, երբեք չի դադարել: Առաջ մեզ հաղթանակն օգնեց ոտքի կանգնել, իսկ հիմա, ցավոք սրտի, պարտությունը շատ է իջեցնում: Բայց վերջնական հանգուցալուծումը դեռ չի եկել, եւ ես վստահ եմ, որ նորից կունենանք հաղթանակներ: Իսկ այս միջոցառումներն այն խորհուրդն ունեն, որ միասին ենք, որ Արցախը մենակ չէ, եւ մայր Հայաստանը, Սփյուռքը միշտ Արցախի կողքին են», - նշել է Դավիթ Սահակյանը՝ ավելացնելով, որ այս առումով պետք է ավելի ծավալուն աշխատանք տարվի, որպեսզի ավելի հեշտությամբ հաղթահարվեն առկա դժվարությունները:

Խոսելով ցուցադրություններից ստացած տպավորության մասին, անվանի մուլտիպլիկատորն առանձնացնում է երեխաների ոգեւորվածությունը, որովհետեւ դա առաջին հերթին իրենց համար է. նրանց զնահատականն ամենակարեւորն է. «Շատ հուզիչ էր ծնողների, մայրիկների արձագանքը, որովհետեւ նրանք էլ ընկալեցին այն ամենը, ինչն ուղղված էր մեծերին: Առհասարակ մենք փորձում ենք մուլտֆիլմեր ստեղծել ոչ միայն երեխաների, այլեւ բոլոր տարիքային խմբերի համար:



«Արցախում «Ձենեսիս Արմենիա»-ի կողմից անցած ամսվա ընթացքում տրվեց մի քանի ծրագրերի մեկնարկ. Մարտունիում բացվեց հավաքուժարան, որը լուծում է 4-5 մարդու զբաղվածության խնդիր, բացվեց կարի աշխատարան, որը շուտով կդառնա կարի ֆաբրիկա, Աղավոյում հացի փուռ բացվեց, շարունակվում է աղբբեջանագիտության կենտրոնի ուսանողների դասընթացը, որի առաջին փուլը կավարտվի հուլիսին: Բավականին ակտիվ աշխատանքային շրջան է մեզ մոտ», - ասում է Գառնի Մուրաֆյանը՝ ավելացնելով, որ աշխատում են բոլոր ճակատներում, բոլոր ոլորտներում:

#### Արցախն ապրում է նաեւ թատրոնով

«Արցախն ապրում է» փառատոնի շրջանակներում Արցախի տարբեր քաղաքներում բեմադրվեցին Սոս Սարգսյանի անվան պետական Համազգային թատրոնի «44 աստիճանի վրա», «Լոռեցի Սաքոն», «Գծավորը» ներկայացումները:

«44 աստիճանի վրա» ներկայացումը դարձել էր Արցախում փառատոն կազմակերպելու գաղափարի հիմքը: Այն մեծ տպավորություն էր թողել «Ձենեսիս Արմենիա»-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սամվել Վարդանյանի եւ նրա տիկնոջ՝ Աննա Դադասյանի վրա:

Աննա Դադասյանը ծնունդով Արցախի Մարտունու շրջանի Սոս գյուղից է, եւ ցանկացել է՝ Համազգային թատրոնի ներկայացումներն անպայման Արցախի բոլոր շրջանները տեսնեն: «Յենց սա լավագույն միջոցն է՝ հետպատերազմյան Արցախում մշակութային կյանքը ակտիվացնելու, վերելքի ու զարթոնքի մեր կրակը մշտավառ պահելու, պատերազմի ցավոտ վերքերը ապրելով ու արարելով ամոքելու, աշխարհին ասելու, որ Արցախն ապրում է, չի վիատվում, իր զավակներին մեծացնում ու դաստիարակում է հայրենիքը շենացնելու, ժամանակակից աշխարհին համընթաց քայլելու եւ իր խլված իրավունքներին վերադարձնելու վճռականությամբ», - մայիսի 23-ին Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատում նախքան ներկայացումն ունեցած իր ելույթում նշել է Սամվել Վարդանյանը:

«Մեր մարտիրոսված տղաների նպատակները մենք իրականացնելու ենք, չկասկածեք, Արցախը լի-նելու է ամուր, անվտանգ, զարգացած, ժամանակին



Փաստացի, այս անգամ էլ դա մեզ հաջողվեց, եւ այն ամենը, ինչ մենք ուզում էինք փոխանցել, կարծում են՝ տեղ հասավ»:

Մուլտֆիլմը երեւանում առաջին անգամ ցուցադրվել է 2021թ. մայիսի 27-ին: «Դեռ այն ժամանակ էինք ուզում բերել Արցախ, բայց ոչ մի կերպ չէր ստացվում: Եվ հենց «Ձենեսիս Արմենիա»-ի կողմից առաջարկ եղավ, միանգամից մեր հավանությունը տվեցինք եւ վերջապես կարողացանք ցուցադրել», - ասում է Դ. Սահակյանը:

Մուլտֆիլմի դիտումներից հետո տեղի են ունեցել քննարկումներ, որի ընթացքում ներկաները կիսվել են իրենց տպավորություններով ու հարցեր ուղղել ռեժիսորին: Նրանք կարեւորել են այն փաստը, որ բացի երեխաներից՝ մուլտֆիլմը մեծ ասելիք ունի հենց մեծահասակներին, որոնք համար ավելի ընկալելի են նրանում առկա ուղերձները:

Տարբերակ ԱՐԱՁԱՆՅԱՆ